ՎԱՍՏԱՔ

№ 5 ՊՍՅԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 5

Փոխրիկ հեղուկը սարի լանջին	*(պատկեր)։*
Սարի լանջին	*(ոտանաւոր)* *Սէյրի։*
Գիւղացին ու փաստաբանը	*Թարգմ. Զ. Տ.-Գ.*
Կաթւոն ու աղւէսը	*Յար. Թումանեան։*
Երդողը	*Գրիգոր Զուբարեան։*
Հրաբուղխ եւ երկրաշարժ	*Գ. Ղազարեան։*
Քրիստոնէութիւնը Հայաստանում և Ս. Էջմիածին	*Յուսիկ Եպիսկոպոս։*

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Въ виду вреднаго направленія издающейся въ г. Тифлисѣ подъ редакціею Тиграна Назаряна газеты «ТАРАЗЪ», Главноначальствующій гражданскою частью на Кавказѣ, на основ. прим. къ ст. 154 Уст. о ценз. и печ., призналъ необходимымъ пріостановить изданіе этой газеты и выходящаго при ней приложенія подъ названіемъ АГБЮРЪ на четыре мѣсяца.

Ի նկատի ունենալով Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ Թիֆլիսում հրատարակուող «ԾԱՂԱՋ» լրագրի վնասակար ուղղութիւնը, Կովկասի բաղաքացիական մասի Կառավարչապետը, ցենզ. եւ տպագ. կանոնադ. *154* յօդ. ծանօթութեան հիման վրայ, անհրաժեշտ համարեց դադարեցնել այդ լրագրի եւ նրա յաւելուած «ԱՂԲԻՒՐ» անուանով ամսագրի հրատարակութիւնը չորս ամսով։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

№ 5

XXII ՏԱՐԻ Մ Ա Յ Ի Ս 1904 թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Михайл. пр. № 81.
ԹԻՖԼԻՍ 1904

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Мая 1904 г.

Փոքրիկ հեղուկը սարի լացչից

ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ

—

Ինչ ես կանգնել սարի լանջին,
Է՛յ լեռների թուխ աղջիկ.
Խիտ-խիտ մազերդ արձակ-փռած,
Ինչ ես տալ քամու բերան։

Ինչու մենակ, ինչպէս չինար,
Սարի գոչին դու կաս կանգնած.
Ինչու բարձրում կուրծքդ ցցած,
Այդպէս հպարտ նայում ես ցած։

Այծերիդ հետ ինչու դու միշտ
Ման ես գալիս լերան կողին.
Ինչու, ինչպէս վայրի մարալ,
Մօտ հովիտից փախչում ես սար։

Քանի՛ անգամ զառներիս հետ
Քո յետևից վազել եմ վեր,

Դու փախել ես, ինչպէս այծեամ,
Վայրագ այծերդ առաջ գցած։

Այծեամ աղջիկ, մարալ աղջիկ,
Ինչ ես կանգնել սարի լանջին.
Ինչո՞ւ երբէք այծերիդ հետ
Դու չես իջնում կանաչ հովիտ։

Ա՜յ, էն սիրուն քարին նստած,
Սրինգ կածեմ ես քեզ համար.
Դու կը պարես ֆռֆռալով,
Մև մազերդ քամուն տալով։

Իրիկան դէմ ծիծաղ-կանչուկ,
Մենք խաղալով իրար բռնուկ,
Մուրուն առաջ՝ այծ ու զառնուկ
Իրար խառնած, կը դիմենք տուն։

Իսկ ամեն օր լուսաբացին
Այստեղ կը գանք մենք միասին,
Էն մեծ առուն էլ չես մտնի.
Ես գրկելով քեզ կանցկացնեմ։

Երբ արևը կը բարձրանայ,
Խոտի շաղը կը վերանայ.
Աղբրի կանաչ ափին նստած,
Ուրախ սրտով կուտենք մենք հայ։

Հայիս միջին նանիս դրած
Սերուցքն ու ձուն ես քեզ կը տամ,
Դու էլ քո մօր պանիր-կարագն
Վարդ ժպտիս հետ ինձի կը տաս։

Եւ ամեն օր սուրուն ամբողջ
Կը քշենք մենք էդ սարի կող,
Որ քո սիրած սարի դոշից
Դու չը մնաս իսկի կարօտ։

Սէյրի





ԳԻՒՂԱՑԻՆ ՈՒ ՓԱՍՏԱԲԱՆԸ

—

Մի անգամ Բէրնար անունով մի ագարակատէր գնաց Բէնն՝ բաղարի և՝ վերջացնելով գործերը՝ մտածեց գնալ փաստաբանի մօտ խորհուրդ հարցնելու։ Նա շատ էր լսել պարոն Պոտիէի մասին, որը յայտնի փաստաբան էր. ասում էին, որ իւրաքանչիւր գործ վերջանում էր աչող, եթէ վարում էին նրա խորհրդի համաձայն։ Գիւղացին նրա հասցէն իմացաւ և գնաց նրա մօտ, Սուրբ Գէորգի փողոցը։ Ճաճախորդները շատ կայէին, և Բէրնարը ստիպուած էր երկար սպասել։ Վերջապէս հերթը հասաւ, և նրան ներս տարան պ. Պոտիէի մօտ։ Սա նշանով նստելու հրաւիրեց նրան և՝ ակնոցը դնելով գրասեղանի վրայ՝ հարցրեց, թէ ինչ գործի համար է ուզում խօսել։ Ագարակատէրը պատասխանեց.

—«Այո, պ. փաստաբան. ճշմարիտն ասած, ես այնքան շատ լաւ բան եմ լսել ձեր մասին, որ գործով գալով Բէնն՝ մտածեցի գէպքից օգտուել և խորհուրդ հարցնել ձեզանից»։

—Շնորհակալ եմ, բարեկամ, ձեր վստահութեան համար,

—ասաց պ. Պոտիէն,—բայց, անկասկած, դուք որև է դատավարական գործ ունէք։

—«Դատավարական գործ։ Ես այդպիսի գործերի թշնամի եմ, և երբէք Պետրոս Բէրնարը ոչոքի հետ չի կռւիլ»։

—Ուրեմն, երևի, ձեր գործը վերաբերւում է որ և է հաշւի կամ ընտանիքի բաժանելու հարց կայ։

—«Ներեցէք, պ. փաստաբան, մեր ընտանիքը չի ժառանգում բաժանելու մասին»։

—Ուրեմն դուք պէտք է պայմանագիր գրել տաք որ և է առևտրական գործի վերաբերմամբ։

—«Ո՛չ, ես այնքան հարուստ չեմ, որ բան առնեմ, այնքան էլ աղքատ չեմ, որ ծախեմ»։

—Դէ, վերջապէս, դուք ինչ էք ուզում ինձանից,—հարցրեց զարմացած փաստաբանը։

—«Բայց չէ՞ որ ես արդէն ասացի ձեզ, պ. փաստաբան,—պատասխանեց Բէրնարը՝ չափազանց ժպտալով,—որ ինձ խորհուրդ է հարկաւոր... ի հարկէ, փողով, որովհետև ես քաղաք եմ եկել և ուզում եմ օգտւել հանդամանքից»։

Այդ ժամանակ պ. Պոտիէն վերցրեց գրիչ ու թուղթ և հարցրեց դիւղացուց.

—Անունդ ինչ է։

—«Պետրոս Բէրնար»,—պատասխանեց նա ուրախացած, որ, վերջապէս, փաստաբանը հիմա հասկացաւ։

—Քանի տարեկան էք։

—«Երեսուն կամ մօտաւորապէս այդքան»։

—Ձեր արհեստը։

—«Ես աղարակատեր եմ»։

Փաստաբանը գրում է երկու տող, թուղթը ծալում է և տալիս իր տարօրինակ յաճախորդին։

—«Արդէն պատրաստ է», բացականչում է Բէրնարը.—«այստեղ, ինչպէս ասում են, չես բոլբոսնիլ։ Ո՞րքան պիտի վճարեմ խորհրդի համար, պ. փաստաբան»։

—Երեք ֆրանկ։

Բէրնարը վճարեց, գլուխ տւեց և ճանապարհւեց տուն։ Երբ նա վերադարձաւ տուն, արդէն ժամի չորան էր։ Ճանա-

պարհին յոգնել էր։ Ներս գնաց տուն՝ մի լաւ հանգստանալու մտադրութեամբ։ Բայց երկու օր էր արդէն, որ խոտը հարած էր և հիմա բալորովին չորացել է. բանւորներից մէկը ներս եկաւ և հարցրեց, թէ խոտը հաւաքե՞ն, թէ ոչ։

—«Հէնց ես երեկոյ,—ընդհատեց ագարակատիրոջ կինը,—այսպէս ուշ գործ սկսելը մեզք է, մանաւանդ, որ վաղը կարելի է առանց դժւարութեան հաւաքել խոտը»։

Բանւորը հակաճառեց, թէ եղանակը կարող է փոխուել, թէ սայլերը լծած են և, վերջապէս, ձեռքներին գործ էլ չը կայ։ Կինը պատասխանեց, թէ քամին լաւ կողմից է փչում, և չտապելու բան չը կայ։ Բէրնարը, որ լսում էր վէճը, չը դիտէր ինչպէս վճռել, բայց յանկարծ յիշեց փաստաբանի թուղթը։

—Սպասեցէք,—բացականչեց նա,—ես այստեղ խորհուրդ ունիմ, նշանաւոր մարդու խորհուրդ, որը ինձ վրայ նստել է երեք ամբողջ ֆրանկ. նա պէտք է մեզ դժւարութիւնից հանէ։ Դէ, Թէրէզա, կարդա, ի՞նչ է ասում, չէ՞ որ դու լաւ կարդում ես ամեն տեսակ ձեռագիր։

Կինը վերցրեց թուղթը և կըմկըմալով կարդաց հետևեալ տողերը.

«Երբէք մի՛ յեսաձգիր վաղուան այն գործը, nr կաւրող ես կասարել այսօր»։

—Հէնց այդպէս էլ գրւած է,—բացականչեց Բէրնարը՝ կարծես այդ մտքից լուսաւորւած.—ուրեմն չուտով գործի դիմեցէք. այ աղջկերք, տղերք, այստեղ հաւաքուեցէք, գնանք խոտը հաւաքենք։

Կինը փորձեց նորից հակաճառել, բայց նա յանդիմանից, թէ նրա համար չեն երեք ֆրանկով խորհուրդ առնում, որ յետոյ չը յետևեն նրան, և թէ պէտք է կատարել փաստաբանի պատւերը։ Նա ինքը օրինակ տւեց ճեացածներին՝ աշխատողների գլուխը անցնելով, և մինչև խոտի հաւաքել-վերջացնելը՝ տուն չը վերադարձաւ։ Դէպքը, կարծես, հաստատեց Բէրնարի վարմունքի խելացիութիւնը, որովհետև դիշերը եղանակը փոխուեց. անսպասելի կերպով փոթորիկ բարձրացաւ հովտում, և միւս օրը, երբ լուսացաւ, տեսան, որ ափերից դուրս եկած

գետը հեղեղել է մարգագետինները և քշել-տարել է հարևանների նոր հարած խոտը։ Բոլոր ագարակատէրերը տուժեցին, բացի Բէրնարից։

Այս առաջին փորձն այնպիսի հաւատ ներշնչեց նրան դէպի փաստաբանի խորհուրդը, որ այդ ժամանակից սկսած՝ նա իր բոլոր դործերի մէջ իբրև կանոն ընդունեց այդ խորհուրդը և՝ չնորհիւ իր կարգապահութեան ու աշխատասիրութեան՝ դարձաւ շրջակայքի ամենահարուստ ագարակատէրերից մէկը։

Բացի դրանից՝ նա երբեք չէր մոռանում պ. Պոտիէի մատուցած ծառայութիւնը և ի նշան իր երախտագիտութեան՝ նրա համար իւրաքանչիւր տարի տանում էր մի զոյգ հաւի ճուտ, ի հարկէ, ամենալաւերից, և երբ խոզաք էր լինում օրէնսդէտների մասին, նա միշտ ասում էր իր հարևաններին. «Աստւածային պատիրանների յետոյ՝ ամենաօգտաւէտը յաւ փաստարանի խորհուրդն է»։

Թարգմ. Ղ. Տ.-Գ.

ԿԱՔԱՒՆ ՈՒ ԱՂԻԷՍԸ.

—

«Կա-կա-քա՛ւ, կա-քա՛ւ, կա-կա-քա՛ւ, կա-քա՛ւ»...
Զայն տըւաւ ծառից մի սիրուն կաքաւ.
Իսկ ծառի տակին՝ մի փոքը դէսը՝
Թուքը կուլ տըւաւ սոված աղւէսը.
—Պահ, տունըդ շինի, գոչեց զարմացած,—
Իսկ ես այնպէս եմ եղել համոզւած,
Որ կոկորդով ես դու միշտ ձայն հանում.
Բայց սխալւած եմ եղել այդ բանում...
Եւ ով է կարող անց կացնել մաքով,
Որ դու, կաքաւիկ, երգում ես աչքով։
«Մ՛չ, սխալւում ես, խորամանկ աղւէս»։
—Ա՛խ, ինչ ես ասում, աչքով տեսայ ես...
Լաւ, թէ այդպէս է, այդ ծառից վեր եկ—
Ասածըս ճշտեմ, հաստատեմ մէկ-մէկ.
Վեր եկ, աչքերըդ փակեմ իմ թաթով,
Տեսնեմ՝ կարո՞ղ ես երգել կոկորդով։
«Է՛հ, էլ ինչ վեր գամ, քանի որ սուտ ես.
Ուզում ես՝ վեր գամ, որ դու ինձ ուտես»։

—Օ՜, ես էլ երբէք կաքաւ չեմ ուտում,
Երդւել եմ արդէն ու տրւել խոստումս.
Եթէ սրբազան երդումըս քանդեմ
Ու երթամ տրւած խոստումիս ընդդէմ,
Էլ այն ժամանակ փրկութիւն չը կայ—
Կը մեռնեմ իսկոյն, Աստւած է վրկայ։

—

Աղէսի խօսքին կաքաւն հաւատաց,
Թևերը բացաւ, թռաւ ղէպի ցած.
Նենգ աղէսն իսկոյն բացաւ իր բերան,
Հօփ արաւ յանկարծ ու բռնեց նրան.
—Ահ՛, յիմար կաքա՛ւ, խելքիդ ա՛ղ անեմ,
Միսըդ վայելեմ, երթամ խա՛ղ անեմ։
«Ամմա՛ն, աղէս չա՛ն, քո գլխին դուրբան»...
—Էլ ուշ է արդէն, պրծել է քո բան։

—

Կաքաւը տեսաւ, որ հնար չը կայ,
Եւ մահը շուտով, ուր որ է, կը գայ.
«Ուզում եմ,—ասաց,—իրրև յիշատակ,
Ֆանի չեմ եղել անմեղ նահատակ,
Սովորեցնել քեզ մի դեղեցիկ բան,
Որ չը մոռանաս դու ինձ յաւիտեան.
Նախ քան ինձ կուտես, երեսըդ շո՛ւռ տուր
Դէպի արևելք չորած մոխիկ տո՛ւր։
Ու բարձր երգի՛ր, իրրև մի գուսան,
Աստուա՛ծ, տուր ինձ այժ համբերութիւն։
Ապա դու հանգիստ վայելի՛ր իմ միս
Ու էլ չես քաղցիլ ամբողջ վեց ամիս»։

—

Շուռ գալ ու երգել հեշտ է ու յարմար,
Այդ մի մեծ բան չէ աղէսի համար.

Ուտելու համար գոնէ կէս տարի
Էլ գլուխը չի տալ նա սար ու քարի։
Եւ հէնց որ շրջուեց, բերանը բացաւ –
Կաքաւը յանկարծ թռաւ, հեռացա՜ւ...
Աղէսը խաբուած, ապշած ու շլուար՝
Նայեց դէս ու դէն—էլ կաքաւ չը կար.
—Ա՜յ, գլխիդ դիպչի քո սովորեցրած
Դեղեցիկ բանը,—ասաց զայրացած,
Ախ ու վախ արաւ ու քաղցած փորով
Հեռացաւ, դնաց մօտակայ ձորով։

Գաւր. Թումանեան

ԵՐԲՈՐԴԸ.

(Ֆրանսերէնից)

—

Այս դէպքը պատահեց Ֆրանսիայում 1870 թուականի Ֆրանսպրուսական պատերազմի ժամանակ։

Գիւղի քահանան՝ Լըգրանը, ժամերգութիւնը վերջացնելով, դուրս եկաւ եկեղեցուց և դիմեց տունն։ Փողոցում նրան պատահեց մի խեղճ կին, որը տեսնելով քահանային՝ ծնկաչոք ընկաւ նրա ոտը և սկսեց արտասուել.

—Տէրտէր ջան, աղատիր...

—Ո՞ւմ, ինչ...

—Իմ ամուսնուն հրացանաձիգ են անելու։

—Ո՞վ և ինչու։

—Պրուսացիները. երէկ նրանցից երեքը սպանել են և այսօր վիճակ են ձգել, որ մեզանից երեքին սպանուածների փոխարէն հրացանաձիգ անեն, և վիճակն ընկել է իմ խեղճ ամուսնուն և երկու ուրիշներին։

Քահանան բարձրացրեց կնոջը և աշխատեց մխիթարել։

—Որդի, ասիր ես ինչ կարող եմ անել անիրաւ պրուսացիների դէմ։

—Տէր հայր, ես խեղճ եմ, երեք փոքրիկների տէր։

Վտանգն իր ահռելի կերպարանքով կանգնած էր Լըգրանի առաջ։ Նա տեսնում էր իր ոչնչութիւնը թշնամիների մօտ, բայց անպաշտպան թողնել մի կնոջ, որ եկել և օգնութեան ձեռք էր խնդրում, դա ևս չէր կարող անել քահ հովիւը։ Նա տատանւում էր։

—Որդի, յոյզ Աստուծոյ վրայ թող լինի։ Ամենաողորմած Աստած քեզ ևս կողորմէ։ Ես կը գնամ և կը փորձեմ,—գուցե կարողանամ։

Եւ Լբգրանը դիմեց դէպի աստիճանաւորի տունը։ Հասնելով տան մօտ, նա սիրտ չէր անում մանել. չէ որ ինքը կանգնելու էր իր ահռելի Թշնամու դէմ. բայց և այնպէս պէտք էր մի կողմ ձգել երկիւղը, և նա վճռական քայլ արաւ։ Տան սենեակներից մէկում խոժոռ դէմքով սեղանի մօտ նստած էր աստիճանաւորը. նա գլուխը բարձրացրեց, երբ լսեց դրան ձայնը, և կէս գերմաներէն ու կէս ֆրանսերէն լեզուով հարցրեց.

—Ձեզ ինչ է հարկաւոր։

—Ես եկայ այստեղ... գիւղացիների համար... ազատեցէք նրանց... նրանք անմեղ են։

—Պատերազմը իր պէտքերի անհրաժեշտութիւններն ունի. ֆրանսիացիները երեք պրուսացի են սպանել, ուրեմն երեք գոհ իրենք էլ պիտի տան։

Շատ խնդրեց քահանան, աշխատեց ապացուցանել նրանց անմեղութիւնը, բայց և այնպէս չը կարողացաւ ազատել բոլորին և սկսեց խնդրել միայն մէկի համար։

—Գոնէ Լերուանին ազատեցէք... նա ընտանիքի տէր է. ունի երեք որդի և մի խղճուկ կին, որ տանջւում է ամուսնու համար...

—Ես, իբրև տէրութեան պաշտօնեայ, պարտական եմ անել այն, ինչ ինձ պատւիրում են։ Չէ՞ որ մեր երեքը չը կան. որ ուզում էք ազատել Լերուանին, տուէք մեզ մի ուրիշը։

Այսպիսի մի պատասխան սառնասրտութեամբ յետոյ միում էր Լբգրանին հեռանալ, բայց նա յանկարծ մի քայլ արաւ դէպ առաջ և յուզուած ասաց.

—Ես չունեմ ոչ կին և ոչ որդիներ... եթէ ուզում էք, ես... ես եմ երբորդը։

Աստիճանաւորը զարմացած նայում էր քահանայի վարդագոյն երեսին։

Մի քիչ լռելուց յետոյ նա ասաց.

—Բայց դուք հասկանում էք արդեօք, թէ ինչ էք խընդրում. չէ՞ որ դեռ երիտասարդ էք. լաւ մտածեցէք...

—Ես ձեզ խնդրում եմ։

Ասիճանաւորը վեր առաւ մի թուղթ, սկսեց մի ինչ-որ բան գրել և վերջացնելով յանձնեց քահանային։

—Ահա Լերուանի արձակման թուղթը... ձեր փոխարէն։

Ծեռոյ պրուսացի սասիճանաւորը զգացուած ասաց.

—Թոյլ տուէք ինձ սեղմել ձեր ձեռը։

Քահանան երկարացրեց իր լայն թևը և նա բարեկամաբար սեղմեց։

Արագ և թեթև քայլերով հեռացաւ Լըգրանը։ Նա այժմ երջանիկ էր, որովհետև ազատեց մի կեանք իր կեանքի գնով։ Նա հասաւ դիւղի ուսումնարանի մօտ, ուր բանտարկուած էին երեք ֆրանսիացիները։

Դրան մօտ սուրը ձեռին շրջում էր պահապանը։

Քահանայի ողջոյնին չը պատասխանելով, նա վերցրեց նրա ձեռից թուղթը։

Սակայն, երբ կարդաց, կարծես թէ ղղյաց և դէմքին ուրախ արտայայտութիւն տւեց։

—Խնդրեմ մտէք։

Մտնելով ուսումնարան, Լըգրանը խնդրեց պահապանից, որ կանչէ Լերուանին։

Խեղճ և վշտաբեկ բանտարկեալն արտասւաթոր աչքերով դիմաւորեց քահանային։

—Իմ կինը, խղճուկ զաւակներս...

—Արիացիր, որդի, յոյսդ Աստուծոյ վրայ դիր։

Եւ քահանան խաղաղ կերպով բացատրեց եղելութիւնը և Լերուանը երեխայի նման սկսեց հեկեկալ. նա կամենում էր իսկոյն և եթ դուրս թռչել և վազել տուն, բայց քահանան հանդարտեցրեց։

Նրանք երկուսը միատեղ դուրս եկան ուսումնարանից։ Մօտենալով տանը, քահանան ասաց.

—Դու մի քիչ սպասիր այստեղ։

Երբ Լըգրանը մտաւ տուն, Լերուանի կինը իր փոկրիկնեերով շրջապատուած լալիս էր։ Տեսնելով ներս մտնող քահանայի դէմքի ուրախ արտայայտութիւնը, նա զւարթացաւ։

—Նա ազատ է։

Լըգրանը ժպտաց։

—Ո՞ւր է նա։

—Հիմա կը գայ։

Եւ կինը փաթաթուեց նեբա մտնող ամուսնոյ պարանոցով։

—Ի՞նչպէս յայտնեմ ես իմ շնորհակալութիւնը, ասաց ի վերջոյ Լերուանը։

—Ես ուրախ եմ, որ դուք երջանիկ էք և դա էլ բաւական է ինձ. սիրեցէք միշտ միմեանց։

Նա սեղմեց ամուսինների ձեռները և համբուրելով փոքրիկներին դիմեց դէպ ուսուցիչարան։ Ուսուցիչարանի սենեակներից մէկի անկիւնում նստած էին Ծերունի Լարդերը և տատ Նուխամեայ Վինկենտիոսը։

Քահանան մօտեցաւ նրանց և սկսեց մխիթարել ու քաջալերել։

—Պէտք է արիասիրտ լինել. աշխատենք անվհատ կերպով հանդիպել մահուան և մեռնել իբրև քրիստոնեայ և ֆրանսիացի. դուք, Լարդեր, մեզ օրինակ եղէք։

—Ի՞նչպէս, մի՞թէ դուք ևս մեզ հետ էք, հարցրեց Ծերունին։

—Այո՛ ես եմ երրորդը—Լերուանի փոխարէն. դուք գիտէք, որ նա, խեղճը, կին և որդիներ ունի։

—Ա՜հ... Եւ դուք ինքնիրդ համաձայնեցիք... Ա՜խ, Ծերունի՛ն, Ծերունի՛ն։

Քահանան բարի ժպտով և ուրախ սրտով աշխատում էր հանգստացնել Ծերունուն։

Լըդրանը, թոյլատուութիւն խնդրելով գնաց եկեղեցի, ուր պահապանին հրամայեց երեկոյեան ժողովրդին հրաւիրել։

Եւ նա յետոյ գնաց տուն։

II.

Իր սովորութեան համեմատ Լըդրանը նախաճաշելուց յետոյ դուրս եկաւ բակը, շրջեց ամբողջ բակը. նա դարձեալ նախկին մարդասէր Լըդրանն էր։

Իր կենդանիներին այցելելուց յետոյ նա մտաւ իւր փոքրիկ պարտէզը։

Ցանկարծ տեսաւ, որ եկեղեցւոյ ժամայոյցի մեծ սլաքը արդէն VI-ի վրայ է, իսկ փոքրը I-ի և II-ի միջև։

—«Երեք ժամից յետոյ ես պէտք է մեռնեմ» մտածում էր նա։ Նա սեղմեց իր կուրծքը, կարծես թէ պաշտպանում էր հրացանի գնդակից։ Էլի երեք ժամ, և նա կը դառնայ դիակ, յաւիտեան կը քնի սառը հողի տակ։

Մեռնել քառասուն տարեկան հասակում, երբ դեռ ևս կեանք կայ առաջը։

Մի թէ կարելի է։ Ո՜հ, նա որքան երջանիկ էր. իբրև քաջ հովիւ, նա հսկում էր իր հօտը և օգնում խեղճերին, բայց շուտով... Ա՜խ, ինչո՞ւ նա այդ անխոհեմ քայլն արեց. ինչո՞ւ իր անձը զոհել ուրիշի համար։

Նա բացեց պարտիզի դուռը։ Մի քանի վերստ հեռու գտնւում էր կայարանը. նա դիտեց չորս կողմը՝ ոչոք և ոչոք չը կայ... Այո, նա կը փախչի հեռո՜ւ-հեռո՜ւ. նա այն ժամանակ արդէն ազատ և ազատ կը լինի։

«Իսկ տաճ խօսքը... Լերուանը»...

Եւ նա ծնկաչոք ընկաւ գետին և սկսեց օգնութեան կանչել մարդկութեան Փրկչին, որը նոյնպէս մահւան առաջ դողացել էր և արիւն-քրտինք մտած՝ աղօթում էր Գեթսեմանի պարտիզում և այժ ու քաջութիւն հայցում Աստուածանից։ Նա խնդրում էր Ամենակարողից իրեն էս տալ արիութիւն, որ անահ դիմաւորի մահւան։

Պարծես հանգստացաւ նա և, մտածելով որ այսպէս մեռնակ ծիալը և մտածելը ջնասակար է, դիմեց դէպի տուն։

Նա իր բոլոր ստացուածքը կտակեց զանազան անճնաւորութիւններին, իսկ էշը հարուստներից մէկին, խնդրելով ծերութեան օրերում հանգիստ թողնել։

Յետոյ նա հագաւ նոր զգեստները։

Լըգրանը դարձեալ երկար և երկար աղօթեց։

Խփեց երեք ժամը։

Նա դիմեց եկեղեցի։

Եկեղեցում հաւաքւել էր մեծ բազմութիւն։

Մտնելով եկեղեցի, քահանան յուղւեց։

—Եղբայրներ, ասաց նա, ես ի սրտէ չնորհակալ եմ ձեզա-

նից, որ հաւաքւել էք այստեղ։ Մենք բոլոր միասին աղօթենք քահանայապետի համար։ Ինձ յայտնեց միայն Երուսաղէմին ա-զատել, բայց միւսներին չը կարողացայ։ Ես նրանց տեսայ. նրանք սպասում են մահուան և մեռնելու են իբրև քրիստոնեայ և իբրև ֆրանսիացի։

Նրա խօսքերը թափանցեցին ժողովրդի սրտի խորքերը։

Բայց յանկարծ մի պիղծորմ ճիչ առ ժամանակ դադա-րեցրեց քարոզը։ Վինկենտիոսի մայրն էր դա, որ ընկաւ գետին։

Նրան դուրս տարան եկեղեցուց։

Ժողովուրդը սկսեց հեկեկալ։

Իսկ քահանան օրհնելով նրանց, դիմեց դէպ ուսումնարան։

III.

Միւս օրը գիւղացիք իմացան, որ Լըգրանը հրացանաձիգ է եղած։

Գրիգոր Զուբարեան.

ՀՐԱՒԻՐՔ ԵՒ ԵՐԿՐԱՁԱՐԻ

(Շարուն. «ԱՂԲԻՒՐ» № 4-իցՙ).

—

Լեռնային տեսակներէն այնպիսիները, ինչպիսիք են կրաքարը և կաւիճը, տարածւած են հազարաւոր քառակուսի վերստեր երկրի վրայ և ընկած են ոչ միայն հարթութիւնների բուսական շերտերի տակ, այլ և աւազաքարերի և թերթաքարերի նման բարձր լեռներ են կազմում։ Ալպեան լեռների, Հիմալայեան շղթայի, Ապատաժի լեռների և Անդերի մեծ մասը կազմւած են կրաքարերից և հանքային ուրիշ տեսակներից, որոնք բացառապէս կամ մասամբ կազմւած են կենդանական մնացորդներից։

Այսպիսով ուրեմն ցաւաքի այն մասը, որ մատչելի էր մեր դիտողութիւններին, կազմւած է լեռնային տեսակներից, որոնք կամ բաղկացած են կարծրացած խճից, աւազից և կաւից, կամ կազմւած են քայքայւած և մի ժամանակ երկրի վրայ ապրող բուսական և կենդանական սեղմւած, ճնշւած մնացորդներից։

Այս բոլորից մենք կարող ենք եզրակացնել, որ այժմեան ցամաքը պէտք է որ մի ժամանակ ջրի տակ եղած լինի և որովհետև կրաքարերը աւելի շերտերն առաւելապէս պարունակում են ծովային կենդանիներ, այդ պատճառով էլ պէտք է ծով եղած լինի։ Սրանից հետեւում է, որ այն բոլոր նիւթերը, որոնցից առաւելապէս կազմւել է ցամաքը, երեան են եկել ծովի մէջ և մի որև է դիպւածով բարձրացել, դուրս են եկել ջրի մակերեւոյթից։

Բացի այս վերոյիշեալ շերտաւոր կազմութիւն ունեցող լեռնային

տեսակներից, պատահում են և այնպիսիները, որոնք շերտաւոր կամ կանոնաւոր կերպով իրար վրայ դասաւորւած կազմութիւն չունեն։ Սրանք կազմում են լեռնային տեսակների երկրորդ, այն է հրաբխային խումբը, միաձոյլ են, այլ պատճառով էլ երբեմն տեսում են միապաղաղ ժայռեր։ Սրանց մէջ քարացած կենդանիներ կամ բոյսեր չեն պատահում և լինում են բիւրեղացած։ Այս տեսակից են՝ գրանիտը, պորփիւրը, բազալտը և ուրիշները։

Գրանիտը գտնւում է գլխաւորապէս Ալպեան, Կարպաթեան լեռնց մէջ և Բոհեմիայի անտառներում անագին բազմութեամբ և մեծ ուրեմբ. տափարակ դաշտավայրերի վրայ ևս գտնւում են առանձին կտորներով։ Պորփիւրները կոնաձև լեռներ կամ մանր բլրակներ են կազմում և գտնւում են Նորվեգիայում, Բելգիայում, Հունգարիայում և Բոհեմիայում։ Բազալտը կոնաձև լեռներ և ապառաժներ է կազմում և համարեա բոլոր հրաբխային տեղերում գտնւում է. այսպէս օրինակ՝ Իրլանդիայի հիւսիսային ծովափերում, Ֆրանսիայում (Օվերն), Արևելեան և միջին Գերմանիայում և այլն։

Միապաղաղ ժայռերի կարգին է պատկանում նաև հրաբուխների դուրս ժայթքած և սառած լաւան։ Հաւանական է, որ լեռնային շերտաւոր տեսակների տակ գտնւում է մի նեղքին շերտ կամ բիւրեղացած նիւթերի զանգւած, որ այստեղ-այնտեղ շերտաւոր կազմութիւն-ների ճեղքւածքներից կամ անցքերից ու հրաբուխներից ժամանակի ընթացքում ճնշման և այլ ազդեցութիւնների շնորհիւ դուրս է հոսել և կազմել միապաղաղ ժայռ՝ր։

Երկրի ջերմութիւնը. Բոլոր դիտողութիւնները ցոյց են տւել, որ քանի կենդրոնին մօտենանք, երկրի ջերմութիւնն այնքան կաւելանայ։ Որ երկրիս խորքերում ջերմութեան աստիճանը խիստ բարձր և անհաւակայելի մի բան է, դրան իրրև ապացոյց ծառայում են շատ տեղերում դուրս բղխող տաք աղբիւրները և հրաբուխները, որոնք դուրս են ժայթքում երկրի միջուկից լեռնային հալւած նիւթեր։ Այսպիսով ուրեմն հաստատ է, որ երկրիս խորքերում բարձր աստիճան ջերմութիւն կայ և դրա պատճառն այն ջերմութիւնն է, որ նա ունէր մայր արեգակից բաժանւելիս։ Այժմ հետաքրքիր է իմանալ, թէ արդեօք այդ ջերմութիւնն ինչ աստիճանաւորութեամբ է բարձրանում՝ սկսած երկրի մակերևոյթից դէպ կենդրոնը։ Այդ նպատակով հետազօտութիւններ կարելի է կատարել բորակաքարի ճեղքւածքներում (буровыя скважины), բովերում և տուննէլներում, որոնք բաւականաչափ խորութեան մէջ շատ մեծ նշանակութիւն ունեն երկրի ներսի տաքութեան աստիճանը որոշ չափով կարգաւորելու և նրա մասին որոշ գաղափար կազմելու համար։

Երկրիս կեղևի վերին շերտերի բարեխառնութիւնը որոշւում է մթնոլորտի բարեխառնութեամբ. որոշ խոութեան մէջ հողի շերտը

ամբանը տաքանում է, իսկ ձմեռը սառչում։ Բայց եթէ քիչ աւելի խորը գնանք, մենք կը հանդիպենք այնպիսի շերտի, որ երբէք ենթակայ չէ լինում օդի ազդեցութեանը։ Այդպիսի տեղերի տարեկան միջին բարեխառնութիւնը ազատ է ամեն տեսակ տատանումներից։ Դրան իբրև օրինակ կարող է ծառայել Պարիզի դիտարանի նկուղը։ Դեռ 1783 թուից սկսած, 27,6 մետր խորութեան մէջ Լաւուազէի դրած ջերմաչափը 100 տարի շարունակ անփոփոխ ցոյց է տւել 11,5°Ց։ Հասարակածային տաք երկրներում, որտեղ տարեկան բարեխառնութեան տատանումը աւելի սահմանափակ է, այդպիսի բարեխառնութիւն լինում է միմիայն 6 մետր խորութեան մէջ։ Եւրոպայում հիւսիսային սառցէ ծածկոցը շատ մեծ տարածութիւն չէ բռնում, միայն մայր ցամաքի հիւսիսային ափերը։ Բայց Ասիայում, որքան նա աւելի ժամանակում է արևելեան սահմանին, այնքան սառցէ ծածկոցն աւելի և աւելի տարածւում է դէպ հարաւ և հէնց Բայկալ լճի մօտ հասնում է 53°, իսկ Ամուր գետի ջրաբաշխի մօտ մինչև 50°, այսինքն այն լայնութեան վրայ, ինչ լայնութեան վրայ որ գտնւում է Ֆրանկֆուրտը Մայնի վրայ։ Հիւսիսային Ամերիկայի արևելեան մասում, Հուդզոնի ծոցի ժամ սառցէ ծածկոցը հասնում է համարեա նոյն լայնութեան։ Ինչ վերաբերում է սառցի խորութեան կամ հաստութեան, այդ մասին մենք կարող ենք աչքի առաջ ունենալ Շերգինի ջրհորը, որ փորւած է Արևելեան Սիբիրիայում Եակուտսկու մօտ, Լենա գետի ափին։ Նրանում 116,6 մ. խորութեան մէջ բարեխառնութիւնը հաւասար է—3°Ց.

Եթէ որ բորակաքարի ճեղքւածքից կամ հանքահորերի այն շերտից, որի վրայ ազդեցութիւն է ունենում արտաքին օդի տարեկան միջին բարեխառնութիւնը, աւելի ցած իջնենք, կը նկատենք բարեխառնութեան աստիճանի բարձրանալը։ Իբրև կենդանի ապացոյց կարող են ծառայել բովերի հեռաւոր մասերի օդի կամ ջրի բարեխառնութիւնը, որ այստեղ-այնտեղ հաւաքւում է։ Ամենախոր բովերը կամ հանքահորերը հասնում են $1^1/_2$ վերստ խորութեան կամ $\frac{1}{3962}$ մասը երկրիս արտաքին մակերևոյթի և նրա կենդրոնի մէջ եղած տարածութեան։ Մարդը չէ կարող յուսալ, որ երբևիցէ կարող կը լինի երկրի աւելի խորքերը գնալ և աստիճանաբար բարձրացող ջերմութեան մասին որոշ գաղափար կազմել. այդ բանը որոշելը շատ դժւար է և չենք կարծում թէ արւեստագիտութիւնը կարողանայ այնքան առաջ գնալ, որ մարդը հնարաւորութիւն ունենայ հասնելու դէթ 10 մղոն խորութեան, մի այնպիսի խորութիւն, որտեղ արդէն կարելի կը լինի զբաղւել մեզ հետաքրքրող հարցերով։ Այդպիսի տեղում կարծւում է, որ ջերմութիւնը մինչև 1000° կը հասնի։ Միայն մի քանի տեսակ երևոյթներ կան, որոնք ապացուցանում են երկրի ներսում զօրեղ ջերմու-

թեան գոյութիւնը. դրանք են՝ հանքահորերը, ջրհորները և բորակաքարերի ճեղքուածքները, տաք աղբիւրները, հրաբուխները։

ա. Հանքահորեր, ջրհորեր եւ բորակաքարերի ճեղքուածքներ. Շատ վաղուց յայտնի է, որ խորը հանքահորերի օդը դրսի օդից աւելի տաք է և առհասարակ որքան խորը լինի հանքահորը, այնքան աւելի տաք կը լինի այնտեղի օդը։ Այսպէս, օրինակ, Մանչեստրի մօտ գտնուղ քարածուխի հանքահորի յատակում, որ 2,151 ոտնաչափ խորութիւն ունի, միջակայն բարեխառնութիւնը հաւասար է 20°Ց, մինչդեռ երկրի մակերևոյթի մօտ միջին բարեխառնութիւնը 10,5°Ց։ Բորակաքարի խորը ճեղքուածքներից բարձրացող ջուրը տաք է լինում։ Այսպէս, օրինակ, Պարիզի մօտ 1,798 ոտնաչափ խորութիւն ունեցող Գրենելեանի ջրհորի ջուրը 27,6°Ց. բարեխառնութիւն ունի։

Ինչպէս վերևն ասացինք, շատ հետաքրքիր է և նոյն իսկ անհրաժեշտ իմանալ, թէ ինչ աստիճանաւորութեամբ է բարձրանում երկրի խորքերում բարեխառնութեան աստիճանը, այսինքն թէ խորութիւնը և բարեխառնութիւնը ինչ յարաբերութեան մէջ են։ Լուծել այդ խնդիրն իսկապէս շատ դժուար է այն տեսակէտից, որ զանազան տեղերում կատարած փորձերից ստացած թիւերը խիստ տարբերւում են միմեանցից։ Տարբեր լինելու պատճառն այն է, որ երկրի այլ և այլ մասերը, հողային տարբեր բաղադրիչ մասերը տարբեր աստիճանի ջերմութիւն են պահում իրենց մէջ կամ արձակում։ Այսպէս, օրինակ, ա. քարածուխի ծալքերում ջերմութեան աստիճանը աւելի բարձր է լինում. բ. մետաղները, իբրև ջերմութեան լաւ հաղորդող, տալիս են տաքութիւնը երկրի աւելի խոր մասերից վերի մասերին. գ. բաւականաչափ խորութիւնից բղխած աղբիւրներն իրենց հետ բերում են տաքութիւն, իսկ երկրի մակերևոյթից բղխած սառն ջուրը սառեցնում է, և դ. վերջապէս ջերմութեան վրայ ազդեցութիւնն են ունենում ոչ միայն լեռնային այն նիւթերը, որոնք դասաւորւած են երկրի խորքերը, այլ նաև վերևը, երեսին դասաւորւածները։

Զանազան տեղ կատարած բոլոր դիտողութիւնները ցոյց են տալիս, որ ջերմութիւնն աստիճանաբար խորութեան հետ միասին աւելանում, բարձրանում է, բայց այս բարձրանալը ոչ միայն միակերպ չէ տեղի ունենում, այլ, որ աւելի նշանաւոր է, մինչև անգամ միևնոյն տեղում ճիշտ միօրինակութիւն չի նկատւում։ Ընդհանրապէս իւրաքանչիւր 110 ոտնաչափ խորութեան մէջ բարեխառնութիւնը միջին թւով 1°Ց. բարձրանում է։ Եւ եթէ բարեխառնութիւնն այսպիսի արագութեամբ դէպ երկրի խորքը գնալով բարձրանայ, այն ժամանակ որոշ խորութեան մէջ (օր. 6 մղոն խորութեան մէջ, երբ տաքութիւնն հասնում է 15,000°) նոյն իսկ շատ դժւարութեամբ հալւող նիւթերն անհամ պէտք է հալւած վիճակի մէջ լինեն։ 12,000 ոտնաչափ խորութեան մէջ ջուրն այնպէս տաք կը լինի, ինչպէս երկրիս մակերևոյթի

վրայ եռացող ջուրը. 36 վերստ խորութեան մէջ նա այն աստիճան տաք կը լինի, ինչպէս հալած ոսկին։ Բայց նկատելի է, որ մեծ խորութիւնների հասնելուց յետոյ անհրաժեշտ կը լինի շատ աւելի ոտնաչափեր ցած իջնել, որպէս զի բարեխառնութիւնը միևնոյն 1°-ի բարձրանայ։

Որովհետև բորակաքարերի ճեղքուածքներում կատարած դիտողութիւնները աւելի հաստատուն են լինում, քան հանքերում և այլ տեղերում կատարածը, այդ պատճառով էլ դիտողութիւնները աւելի հարկաւոր է այդպիսի տեղերում կատարել։ Հէնց այդպիսի տեղերում հաշուել և գտել են երկրի խորքում ջերմութեան աստիճանաբար բարձրանալը, թէպէտ այդ գտածը մի մօտաւոր թիւ է, որ մօտ ժամանակներումս կարող է հնթարկուել էական փոփոխութիւնների։ Տեղեկութիւն չունենալով երկրիս կեղևի բարեխառնութեան մասին, նաև հնարաւորութիւն չունենալով մօտիկ ապագայում ձեռք բերել այդ տեղեկութիւնները, այստեղ չենք կարող ոչ մի կերպ որոշակի վճռել այդ հարցը, ոչ տեսականօրէն և ոչ էլ գործնականօրէն։

Հանքահորերից քարածուխ և զանազան մետաղներ ձեռք բերելու համար մարդիկ քանի գնում աւելի խորն են գնում, աւելի խոր տուննելներ են փորում, բայց մինչև օրս մարդիկ չեն հասել կամ գըտել այն սահմանը, որից այն կողմ չափազանց բարձր աստիճանի ջերմութիւնը արգելք լինէր մարդկանց ստորերկրեայ գործունէութեան։ Մշակները կարողանում են տանել 42,2°—46,7° բարեխառնութիւնը և եթէ չեն ձլասւում, դրա պատճառն այն է, որ հանքահորերի օդն աչքի է ընկնում իր սաստիկ չորութեամբ և երբեմն էլ տեղ-տեղ պատահում են բաւական սառն շերտեր։ Հանքերի ամենատաք մասերում բանւորները 10 րոպէից աւելի չեն կարողանում աշխատել։ Փորձեր են եղել աշխատելու 50° ջերմութիւն ունեցող բովերում, բայց իզուր, որովհետև մարդն այդպիսի պայմաններում աշխատել անկարող է, շուտով նրա մտաւոր ընդունակութիւնները խանգարւում են և մահ է յառաջանում։ Արդէն յայտնի է, որ հէնց այժմ էլ հանքահանների մէջ մահուան դէպքեր շատ շատ են պատահում, շատերն իրենց շահասիրութեան զոհ են գնում ուղղակի այդ փոսերի ծանրահոտութեան մէջ աշխատելով։

Շատ անգամ բովերում բարձր աստիճանի բարեխառնութեան պատճառը ոչ միայն խորութիւնն է լինում, այլև տեղական ուրիշ անբարեյաջող պայմաններ, ինչպէս, օրինակ, տաք աղբիւրները, մինչդեռ մի ուրիշ տեղում այդ նոյն խորութեան մէջ անհամեմատ աւելի զով է լինում։ Երկրի խորքերում բարեխառնութեան աստիճանի բարձրանալովը ձլասւում են շատ լեռնային և ստորերկրեայ աշխատութիւնները, որովհետև մարդու արեան բարեխառնութիւնը մօտաւորապէս 37° է, քառասուն աստիճանն արդէն սաստիկ տենդի նշան է. եթէ բարեխառ-

նութիւնը հասնի 42°, ինչպէս, օրինակ, տիպի դէպքում, մարդը կը մեռնի։ Որպէսզի հնարաւոր լինի աշխատել, մարդու արեան բարեխառնութիւնը չը պէտք է հասնի այդ սահմաններին։ Ընդհանրապէս կարելի է ասել, որ չոր օդի մէջ մարդիկ կարող են աշխատել մինչև 50° բարեխառնութեան մէջ, որովհետև այդ պայմաններում կաշւի մակերևոյթի գոլորշիացումից կաշին որոշ չափով զովանում է։ Միևնոյն օդի մէջ 40° բարեխառնութիւնն աշխատութեան ամենաբարձր սահմանն է կազմում։

Բ. Տաք աղբիւրներ. Երկրի խորքերում սառուկ չերմութեան գոյութեան մասին, ինչպէս վերևն ասացինք, իրրև ապացոյց ծառայում են նաև տաք աղբիւրները։ Համարեա երկրագնդիս բոլոր կողմերում տաք ջրի աղբիւրները հոսում են երկրի խորքերից։ Հրաբխային շրջաններում նրանց ջուրը երբեմն եռացման վիճակի մէջ է լինում և այդ վիճակի մէջ է մնում մշտապէս։ Բացի սրանից, մի քանի դէպքերում, ինչպէս, օրինակ, Իսլանդիայի տաք աղբիւրներից մէկի շուրջը մինչև 128°Ց. չերմութիւն է ունենում, այսինքն ջրի եռացման աստիճանից դեռ 28° բարձր։ Այդ ջուրը մօտենալով երկրի մակերևոյթին բարձրանալն շատ չամաչմամբ գոլորշի է դառնում և դուրս է թափում բարձր եռացող ջրի և գոլորշու հոսանք։

Շատ անգամ տաք աղբիւրներ պատահում են գործող հրաբուխներից հեռու։ Այսպէս են, օրինակ, Բատի տաք աղբիւրները, որոնք գտնուում են հարաւ-արևմտեան Անգլիայի ցած հարթութիւնների մէջ— մի կողմից Իսլանդիայի հրաբխային լեռներից 1,500 վ. և միւս կողմից՝ Վեզուվից 1,650 վ. հեռաւորութեան վրայ։ Գերմանիայում Կարլսբադի աղբիւրների ջրերի բարեխառնութիւնը՝ 75° է, իսկ Իսպանիայի հիւսիս-արևմտեան մասի մի քանի աղբիւրներ ունեն մինչև իսկ 89°Ց ջերմութիւն։ Այս բոլոր տեղերը հեռու են գտնուում գործող հրաբուխներից։ Ընդհանրապէս նկատելի է, որ տաք աղբիւրները բղխում են լեռնաշղթաների երկարութեամբ և կամ այն տեղերից, որտեղ լեռնային տեսակներն հնթակայ են եղել սառուկ ճնշման և դուրս հէնց այդ ժամանակ էլ սառուկ տաքացած են եղել։ Հանդած հրաբուխներից մի քանիսը դեռ կապւած են տաք աղբիւրների հետ։ Կենտրոնական Ֆրանսիայի նախնական հրաբխային շրջանում պատահում են բազմաթիւ աղբիւրներ, որոնց բարեխառնութիւնը հասնում է մինչև 79°Ց.

Բոլոր տաք աղբիւրներից ամենից աւելի նշանաւոր են և աչքի են ընկնում այնպիսիները, որ ջուրը դուրս են ձգում մեծ ուժով։ Սրբանք լինում են հրաբխային տեղերում և կոչւում են գեղերներ, որովհետև առաջին անգամ այդպիսի աղբիւրներ նկատել և նկարագրել են Իսլանդիայի Գեյզեր անունով մի տեղում։ Իսլանդիայի այն մասը, որտեղ կենդրոնացած է այդ աղբիւրների մեծ մասը, մօտաւորապէս 3

քառակուսի վերստաչափ տարածութիւն է բռնում հրաբխային ժայռերի ցած հարթութիւնների մէջ։ Երկրի այդ սահմանափակ տարածութեան մէջ կան շատ անցքեր, որոնցից շատրւանի նման դուրս են ցայտում տաք ջուր և գոլորշի։ Տարբեր մեծութեամբ գեյզերներ կան. ամենամեծ գեյզերի աւազանի մեծութիւնը երկրի մակերևոյթից 15 ոտնաչափ բարձր է, որի կենդրոնում իջնում է 8 ոտնաչափ լայնութեամբ մի խողովակ։ Ջուրը 150—200 ոտնաչափ բարձրութեամբ ցայտում է վերև բարձրաձայն պայթողներով և գոլորշու ամպերով։ Մի շարք ուրիշ գեյզերներ գոյութիւն ունեն նաև Նոր-Զելանդիայում, որտեղ նոյնպէս պատահում են գործող և հանգած հրաբուխներ։

Երկրի խորքերի ջերմութեան աստիճանաբար բարձրանալը կարելի է աւելի լաւ որոշել նաև արտեզեան ջրհորների միջոցով, որովհետև այդ կերպ կարելի է իմանալ երկրի բաւական խոր մասերի բարեխառնութիւնը. բացի դրանից, այս դէպքում աւելի որոշ և կանոնաւոր բարեխառնութիւն է տեղի ունենում։

Թողնելով առ ժամանակ երկրի ներսի ջերմութեան իբրև ամենահիմնաւոր ապացոյց ծառայող հրաբուխների մասին առ այժմ խօսելը, կարևոր է նախ և առաջ իմանալ ամենքին հետաքրքրող այն հարցը, թէ արդեօք ինչու քանի խորը գնանք երկրի ներսը, այնքան աւելի կը բարձրանայ ջերմութեան աստիճանը։ Այդ մասին շատ բազմատեսակ բացատրութիւններ կան։ Ոմանք դրա պատճառը համարում են այն սկզբնական ջերմութիւնը, որ ունէր երկիրն արևից բաժանուելիս (կանտ-լապլասի տեսութեամբ), ուրիշները կարծում են, որ դրա պատճառը երկրի խորքերում տեղի ունեցող քիմիական գործողութիւններն են։ Վերջապէս գիտնականների մի այլ խումբ ենթադրում է, որ երկիրը և ամբողջ արեգակնային համակարգութիւնն անցել է տիեզերքի անհուն տարածութեան աւելի տաք մասերից։

Փ. Պազարեանց

(Կը շարունակուի)

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

և

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

(Շարունակ. «ԱՂԲԻՒՐ» № 4-էց)

Գէորգ Վէբէրը (նոյն եր. 562) քրիստոնէութեան մտնելը Հայաստան և ազգային կրօն դառնալը քիչ յետոյ է դնում, գրելով. «Տրդատ, որ հռովմայեցիների հովանաւորութեան տակ էր թագաւորում, կամեցաւ կոստանդիանոսի հետ բարեկամութիւն ամրապնդել քրիստոնէութիւնը մուծանելով Հայաստան։ Բայց դրանով նախարարներից շատերին, որոնք չէին հրաժարուել բազմաստուածութիւնից և բազմակնութիւնից, գրգռեց իւր դէմ»։—Յիրաւի, նախարարները գրգռուեցին Տրդատի դէմ. բայց այդ նրա թագաւորութեան վերջին տարիներին էր (Խոր. գիրք Բ. գլ. ՂԲ.)։

Ա. Մ. Գարագաշեանը (Քնն. պատմ. մասն Գ. 337) համաձիտ է Վէբէրին դնելով Ս. Հռիփսիմեանց նահատակութիւնը 305 թուին և Տրդատի քրիստոնէութիւնը Կոստանդինի աղեցութեան տակ 306 թ., երբ Կոստանդինը զօրքից Օգոստոս կամ կայսր ընտրուեց։ Ըստ մեզ՝ Տրդատ արդէն քրիստոնեայ էր, երբ Կոստանդինը քրիստոնեայ դարձաւ։ Մեր պատմիչների ակնարկած Տրդատի Հռովմ գնալն, ու Կոստանդնի հետ բարեկամական դաշն կապելը Տրդատի քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ էր, և Տրդատն ամրապնդում էր բարեկամութիւնը Կոստանդնի հետ՝ որպէս քրիստոնեայ թագաւոր։ Ասել ենք արդէն, որ մինչև Տրդատ Հայաստանում քրիստոնեաներ կային. նոյնը հաստատում է և Գարագաշեանը գրելով (եր. 336). «Թէպէտ այսպէս անագան ուրեմն մեր քրիստոնէութիւնը յարքունիս Հայոց հռովմէական աղդեցութեամբ, բուն մուտ նորա սակայն կը թուի լեալ հին, ոչ հեռի ժամանակաւ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան...»։ (եր. 339) «Ա՛ռ Տրդատաւ, նախ քան զհրապարակական դարձն հանդերձ արքունեօք ըստ հռովմէական օրինակին՝ կային ապաքէն ի Հայս, մանաւանդ յարևմտեան մասին քրիստոնեայ եկեղեցիք, այնպէս բազում, որպէս ի հռովմէական պետութեան առ կոս-

տանդիանոսիւ, թէպէտ ընդ հալածանօք»։

Պ. Կ. Եղեանը «Ներքին կեանք Հին-Հայաստանի» գրքում (Ժարգ. ռուս. Պ. Ռօշհանց 1864 թ. երես 107—108) հիմնուելով ազգային պատմիչների վրայ, ասում է, որ Հայք արդէն քրիստոնեայ էին՝ երբ Կոստանդինը քրիստոնէութիւն ընդունեց։ Նա ծանօթութեան մէջ բերում է Սէն-Մարտէնի խօսքերը՝ հաստատելու իր ասածը։ Սէն-Մարտէնը յիշելով Եւսեբիոսի աւանդածի Մաքսիմիանոսի դէմ եղած պատերազմի մասին և յայտնելով՝ որ Հայք Կոստանդինից առաջ արդէն ընդունել էին քրիստոնէութիւնը, գրում է. «Այս պարզ տեղեկութիւնը, որ տալիս է մեզ Եւսեբիոս, բաւական է, որ մեզ ցոյց տայ, թէ Հայք են իսկապէս քրիստոնէական հաւատն ընդունող առաջին ազգը... Ինչ որ չլինի, կարելի է հաստատ ընդունել, որ քրիստոնէութիւնը գոնէում է 276 թուին Հայաստանեայց թագաւորի, իշխանաց և ժողովրդի կրօն»։ Պ. Եղեանը նոյն ծանօթութեան մէջ աւելացնում է. «Մի ուրիշ տեղ, միևնոյն Սէն-Մարտէնը ասում է. «18 տարի առաջ քան զՏրդատի Հայաստանի գահի վերայ նստէն և 30 տարի առաջ քան զԿոստանդինի քրիստոնէութիւնը ընդունելն, Հայք և նրանց թագաւորը գրկել էին քրիստոնէութիւնը»։ Եւ եզրակացնում. «Այսպէս ս. առաքելոց Հայաստանում ձգած սերմերը, չնայած հալածանքին, հասան և պատրաստեցին ժողովուրդը աստուածային խօսքը ընդունելու Հայաստանի երկրորդ լուսաւորիչ սուրբ Գրիգորի բերանով»։

Գարագաշեանը (Քնն. պատմ. մասն Գ. եր. 337) հայոց դարձի պատմութիւնը վերլուծելիս՝ ասում է. «Թող ըստ ոգոյ ինն և տասներորդ դարուն, որ այնպէս դժկամակ է ընդունել զաքանչելիս՝ զի վեր քան զբնութիւն պայման պատմութեան իջուցանենք ի բնական. Թող Գրիգոր—փոխանակ լինելոյ իբրև գաղտնի ինն խորհրդով՝ որդի Անակայ ուրուն պարթևի, յղացեալ ի տեղւոջ վկայութեան առաքելոյն Թադէի առ ի առնուլ զոգի նոցա (Խոր.), և ապա մտեալ ի սպասաւորութիւն Տրդատայ, ի հատուցանել զպարտս սպասաւորութեան հօրն (անդ եւ առ Ագաթ.)—լիցի ի ծնէ կապադովկացի (ինչպէս կապադովկիան անունն իսկ կը յայտնէ), պաշտօնեայ մերոյ ի գլխաւոր հեղեցեցաց Հայոց ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն կեսարիոյ. տանջանաց թիւը և տեսակները, որ կուտակութիւն ինն են սքանչելեաց՝ իջուցանենք ի լոկ հալածումն. Գրիգորի բազմամեայ բնակութիւնն յօձարնակ վիրապին՝ ի լոկ բանտարկութիւն. Հռիփսիմեանց, ոչ այնպէս բազմաց գալուստն ի Հռոմայ՝ իջուցանենք ի փախուստ ի Քոքուէն—Ասիոյ յերեսաց հալածանաց ուրուն ի բռնաւոր կայսերաց, որ գտանական էին անմեղութեան կանանց, և զպատնուն նոցա՝ ոչ այնպէս կոտա-

նօք, այլ յանկարծ ցասմանէ թա-
գաւորին...։ Այս ամէնն արդարև
կը վոխէ պատմութեան ձևն, այլ
ոչ իրաց էութիւնը։ Որ ի վեր
քան զբնականն էր՝ լինի բնա-
կան, հանդերձ այնու և բանա-
ւոր»։

Այս բոլորը հաստատում են, որ
Ա. նախ քան ս. Գրիգորի քարո-
զութիւնը Հայաստանում եղել է
քրիստոնէութիւն, թէև հալա-
ծւած. Բ. Հայ ազգն ամբողջո-
վին իւր թագաւորի հետ ընդու-
նել է քրիստոնէութիւն ս. Գրի-
գորի քարոզութեամբ Տրդատի
թագաւորութեան 15-րդ տարին,
այսինքն 301 թուին, և որ ս.
Գրիգորը սուրբ Բարդուղիմէոս և
Թադէոս առաքեալներից յետոյ
մեր երկրորդ լուսաւորիչն է. Գ.
ս. Հռիփսիմեանք հայ էին Փոքր-
Ասիայից Մեծ-Հայք եկած։

Գալով ս. Գրիգորի ծագմանը,
պէտք է ասենք, որ նա հասարակ
ծագումից չէր. որովհետև ամ-
բողջ Դ. դարի ընթացքում նրա
սերունդը հանդիսանում է որպէս
հարուստ կալուածատէր. մերձա-
ւոր ազգական խնամիութեամբ
հայոց թագաւորի և նրա վերջին
շարաւաւիղը ս. Սահակ կոչւում
էր Պարթև։ Անհաւանական չէ,
որ նա պարսից թագաւորից ու-
ղարկուած Խոսրով թագաւորին,
Տրդատի հօրը, սպանողի որդին
լինի։ Գէորգ Վէբէր (IV հատ. եր.
498) ընդունում է այն փաստը,
որ պարսից Շապուհ թագաւորը
իւր մարդկանցով սպանեց Խոս-
րովին։ Նա գրում է. «Պարսից
Շապուհ (Սապօր) նուաճեց Հա-
յաստանը, որ գտնւում էր Հռով-
մայեցոց հովանաւորութեան տակ։
Հայոց Խոսրով թագաւորը սպա-
նուեց (259 թ.) Շապուհից ու-
ղարկուած մարդկանցից։ Խոսրո-
վի որդին Տրդատը թագնուեց
յաղթողներից»։ Եթէ Հայաստան
մարդիկ ուղարկուել են Խոսրո-
վին սպանելու, կարող էր և Գրի-
գորը նրանցից մէկի որդին լի-
նել, որ ազգային պատմիչների
ասածին նայելով՝ Խոսրովի ցե-
ղակից Պարթև էին։

Դ.

1. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հայրապետ
ընտրելը։

—

Քրիստոնէութիւնն ազգային
կրօն դառնալուց յետոյ հարկաւոր
էր եկեղեցական կազմակերպուած
պաշտօնէութիւն հաւատացեալ-
ների հոգևոր պէտքերը լցնելու
համար։ Ուստի Տրդատ թագա-
ւորը ժողովելով նախարարնե-
րին, մեծամեծներին և ժողովրդի
ներկայացուցիչներին առաջար-
կեց հովուապետ ընտրել։ Ժողովը
Տրդատի հաւանութեամբ միա-
ձայն ընտրեց սուրբ Գրիգորին
(Ագաթ. եր. 293)։ Ս. Գրիգորը,
որին ցանկալի էր քրիստոնէու-
թեան քարոզիչ մնալ, դժուարու-
թեամբ յանձն առաւ հովուապե-
տութիւնը, չը կարողանալով բա-
ցէ ի բաց մերժել։

Տրդատը մեծ պատուով և ահա-
գին բազմութեամբ ուղարկեց
սուրբ Գրիգորին Կեսարիա այն-
տեղ քահանայապետական ձեռ-
նադրութիւն ստանալու, որովհե-

ան Մեծ Հայաստանում եպիսկոպոս չը կար, իսկ Կեսարիան գնալով Փոքր-Հայքում՝ Հայաստանի մերձաւոր եպիսկոպոսական աթոռն էր։

2. Սուրբ Գրիգորի վերադարձը Կեսարիայից: Տրդատի մկրտութիւնը:

—

Սուրբը Գրիգորը Կեսարիայից վերադառնալիս հետը բազմաթիւ յոյն և ասորի հոգևորականներ բերեց։ Ճանապարհին ամեն տեղ քարոզում, մկրտում, եկեղեցիներ էր հաստատում և հետը բերած հոգևորականներից պաշտօնեաներ կարգում, հաւատացեալների հոգևոր պէտքերը լցնելու համար։ Այս նորահաստատ եկեղեցիներից մէկն էլ Տարօնի Աշտիշատի եկեղեցին է։

Սուրբը Գրիգորը երբ հասաւ Բագրեւանդ գաւառը, այնտեղ, Եփրատի ափին, տեսաւ Տրդատին իր բոլոր ընտանիքով, նախարարներով, աւագանիով ու զօրքով իրեն սպասելիս։ Սուրբը Գրիգորն այդտեղ իսկ Եփրատի մէջ մկրտեց բոլորին։ Ի յիշատակ այդ մեծ և փառաւոր եղելութեան՝ մկրտութեան տեղը՝ գետի ափին կառուցուեց ս. Յովհաննէս Մկրտչի անունով մի եկեղեցի։ Այդ եկեղեցին, վերաշինած է. դարում, այժմ կոչւում է Բագրեւանդի սուրբ Յովհաննու վանք կամ Ալաշկերտի Ուչքիլիսէ։

3. Վաղարշապատի Կաթուղիկէի կառուցումն:

—

Սուրբը Գրիգորը, իր առաքելութեան գործը շարունակելով, Տրդատի հետ հասաւ Վաղարշապատ և առաջին գործն եղաւ 303 թուին Կաթուղիկէի հիմքը դնելն այնտեղ՝ ուր տեսիլքի ժամանակ Ահաւոր մարդը խփել էր ոսկի ուրը (մուրճ) և ուր, ինքը դեռ Կեսարիա չը գնացած, կանգնացրել էր խաչ և շրջապատել Տրդատի աջակցութեամբ և գործակցութեամբ Կաթուղիկէի կառուցումն շուտով աւարտուեց։

Սուրբը Գրիգորը իր հայրապետական աթոռը հաստատելով Վաղարշապատի Կաթուղիկէում՝ շրջում էր Հայաստանի ամեն կողմերը և Տրդատի աջակցութեամբ շարունակում իր առաքելական պաշտօնը քարոզելով, դպրոցներ բանալով նորադարձ քրմերի որդիներին քրիստոնեական հոգով կրթելու և եկեղեցու պաշտօնեաներ պատրաստելու, եկեղեցիներ հաստատելով և եպիսկոպոսներ ու հոգևոր պաշտօնեաներ կարգելով։

4. Կրօնի բարեբար ազդեցութիւնը:

—

Սուրբը Հռիփսիմեանց նահատակութիւնը, ս. Գրիգորի եկնելը Աբգարատի վիրապից, Տրդատի և հայոց ազգովին դարձը, սուրբ կոյսերի գերեզմանների վրայ վկայարանների կառուցումն, ս. Լուսաւորչի տեսիլքը, Տրդատ թագաւորի և իր բանակի մկրը-

տուելը Եփրատ գետում, Վաղարշապատի Կաթուղիկէի կամ Էջմիածնի հիմնարկութիւնը, մի խօսքով՝ հայոց հոգևոր վերածնութիւնը • կատարուեց 301—303 թ.։

303 թիւը,—երբ նոր կրօնքի համար ամէն ինչ կատարուել էր, երբ Հայաստանում սկիզբն առաւ մի հոգևոր նուիրապետութիւն, որ իւր դաւանած սկզբունքի հետ յաւիտենական է, երբ հիմնուեց ու կառուցուեց քրիստոնէութեան հաստատութեան ու հոգևոր հայրապետութեան յաւիտենական յուշարձանը—Վաղարշապատի Կաթուղիկէն իբրև Մայր Աթոռ,—ամեն իրաւունքով կարող է մեր ազգի հոգևոր վերածնութեան դարապետը համարուել։ 303 թիւը քրիստոնէութեան յաղթանակի տարին է Հայաստանում։ Իսկ ս. Էջմիածնի կառուցումն, սուրբ կոյսերի վերկայարանների շինուելը՝ այդ հոգևոր յաղթութեան համար բարձրացրած կամարներն են, որոնց միջոցով քրիստոնէութեան փերկարար լոյսը թափանցելով Հայաստանի ամեն կողմերում՝ լուսաւորեց խաւար մտքերը հայ տառերի գիւտով, սուրբ Գրքի հայերէն թարգմանութեամբ, հայ լեզուի և գրականութեան ծաղկմամբ։

Ն. Հայրապետական Աթոռի Ա. տրջան։

—

303—453 թիւը, ամբողջ մի և կէս դար, Վաղարշապատի Կաթուղիկէն կամ ս. Էջմիածինը Հայրապետական Աթոռ էր։ Հայրապետութիւնը սկսուելով ս. Լուսաւորչից, սակաւ բացառութեամբ նրա սերնդի մէջ յարատևեց մինչև ս. Սահակ Պարթևը, որը վախճանուեց անմոռանալի 448 թուին։ Այսպէս, եթէ ասենք, որ կաթուղիկոսութիւնը ս. Լուսաւորչի սերնդի համար ժառանգական էր դարձել՝ չենք սխալուիլ։ Լուսաւորչի սերնդից կաթուղիկոսներն ընտանեկան կապերով կապուած լինելով հայ թագաւորական և նախարարական տների հետ, քաղաքական մեծ ազդեցութիւն ունէին թէ Հայաստանում և թէ օտարների մօտ։

Սուրբ Լուսաւորչի սերնդից հայրապետ ունենալը կամ Հայրապետական Աթոռի՝ ս. Լուսաւորչի սերնդի մէջ ժառանգական լինելն այնքան սովորական էր, որ հայք այդ սերնդից չեղող մի քանի հայրապետների անուններըչեն դնում հայրապետների շարքում։ Ներսէս Մեծից յետոյ մինչև սուրբ Սահակ Պարթևը 13 տարուայ ընթացքում (384—397 թ.) գահակալող կաթուղիկոսների գոյութիւնը չէ ընդունուում։ Փաւստոս Բիւզանդացին գրում է. «Յայնմհետէ բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց. այնուհետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն ՚ի վերոյ միայն նստէր և հաց օրհնէր թագաւորացս (Ե, իԹ.)»։ Սահակ Պարթևի մահից յետոյ Խորենացին էլ (գիրք. Գ. գլ. կՀ.) ողբում է Աբշամունի թագաւորութեան հետ

քահանայապետութեան բարձունքն Լուսաւորչի ցեղից, գրելով. «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ... զի բարձաւ թագաւոր և քահանայ...: Ողբասջիք քեզ, եկեղեցի Հայաստանեայց... ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ»:

Պէտք է խոստովանել, որ հայրապետութեան այս առաջին շրջանում ս. Լուսաւորչի սերնդից եղած բոլոր հայրապետներն էլ, իրանց կոչման բարձրութիւնը գնահատելով՝ արժանաւոր հովուապետներ հանդիսացան և եւ բախտաղէտ հայ եկեղեցին նրբանց, առանց բացառութեան, սրբոց կարգն է դասել: Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ս. Արիստակէս, ս. Վրթանէս և ս. Յուսիկ նուիրուած էին քրիստոնէութիւնը քարոզելուն, հեթանոսական սովորութիւններն ու զեղծումները վերացնելուն և քրիստոնէութեան կարգ ու կանոնները նորահաստատների մէջ հաստատելուն: Ս. Լուսաւորիչը Հայրապետական Աթոռը յանձնելով ս. Արիստակէսին, վախճանուեց առանձնութեան մէջ: Իրանց բնական մահով վախճանուեցին Վրթանէսն ու Սահակ Պարթևը: Արիստակէսն ու Յուսիկը սպանուեցին կամ նահատակուեցին հաւատի համար, իսկ Մեծն—Ներսէսը՝ Թունաւորուեց: Պարթև կաթուղիկոսներ.

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ 303—334 թ.
2. Ս. Արիստակէս 334—341 թ.
3. Ս. Վրթանէս 341—356 թ.
4. Ս. Յուսիկ 356—361 թ.
(Պապ և Աթանագինէ անարժան)
5. Մեծն-Ներսէս 364—384 թ.
6. Ս. Սահակ Պարթև 397—438 թ.

Մեծն-Ներսէսի ժամանակ զարգանալ սկսեց վանական կեանքը Հայաստանում. և Ներսէսը վանքեր հաստատելու և նրանց բարեկարգելու համար մեծ ջանք գործ դրեց: Վանքերը կարելի է բաժանել երեք կարգ.—Ա. մենաստան, ուր ժարդիկ խմբուում էին կրօնաւորական-ճգնաւորական կեանք վարելու, առանձնանալով աշխարհից և աշխարհային հոգսերից: Մենաստաններում կրօնաւորներն իրանց կեանքն անցնում էին ժամերգութեամբ, աղօթքով ու ծոմապահութեամբ: Բ. Դպրեվանք, ուր խմբուում էին կրթութեան գործին նուիրուած ժարդիկ և ուսումնատենչ պատանիներ, հմուտ և փորձուած դաստիարակների ձեռքի տակ ուսում և գիտութիւն սովորելու և եկեղեցու պաշտօնէութեան պատրաստուելու: Գ. Վանքեր, ուր խմբուում էին աշխարհից հեռացած, բայց բարի գործի ծառայ մարդիկ: Վանքերում իջևանում էին ճանապարհորդները, պատսպարում էին գործելու անընդունակները, տկարները, դանազան վարակիչ հիւանդութեամբ տառապողները, որոնց անմարդասէր հեթանոսութիւնը դուրս էր ձգում բնակութիւններից: Վանականներն անձնուիրաբար հոգում էին իրանց դիմողների և իրանց մօտ պարսպատուածների պէտքերը:

Ցուսիկ եպիսկոպոս

(Կը շարունակուի)

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

ԷՇԸ ԵՒ ՆՐԱ ՍՏՒԵՐԸ

—

Մի անգամ ամենայն հռչակաւոր հռետոր Դէմոսթենեսը բազմաժեան առաջ խօսում էր շատ կարեւոր հարցերի մասին, բայց նկատեց, որ իրեն չեն լսում։ Այն ժամանակ, ընդհատելով իր ճառը, նա ասաց.— Այս րոպէիս մի նորագոյն անեկդոտ կը պատմեմ ձեզ։ Մի անգամ, խիստ շոգի ժամանակ, մեր քաղաքից մի երիտասարդ մարդ աւանակ վարձեց, որ Մէգար գնայ։ Էշը քշողը գնում էր կողքից։ Երիտասարդը արդէն կ'սկսի ճառագայթներից պաշտպանուելու նպատակով իջաւ աւանակից եւ ուզեց կենդանու կողքից կռացած գնալ, որ օգուտ նրա ստուերից։ Բայց քշողը ոչնչ վիճել այդ բանի մասին՝ առարկելով, թէ նա վարձել է իշը եւ ոչ թէ նրա ստուերը։ Իսկ երիտասարդը, ընդհակառակը, պնդում էր, թէ վարձելով իշը նրա ստուերն էլ վարձել է»...

Այստեղ Դէմոսթենեսն ընդհատեց իր պատմութիւնը եւ իջաւ ամբիոնից, բայց ժողովուրդը մրմնջաց աղաղակեց.

—«Դէ վերջացրու պատմութիւնդ, ասա—ետպէս վերջացաւ վէճը»։

—Էնպէս էնպէս, իսկոյն վերջացաւ, — դառն հեգնութեամբ պատասխանեց Դէմոսթենեսը.

Այս դասը ապրեցութիւն արաւ. հռետորը շարունակեց իր ճառը, որը եւ լսեցին ուշադրութեամբ, որին նա իսկապէս արժանի էր։

Թարգմ. Ջ. Տ.-Դ.

ՕԿՏԱՒ ՄԻՐԲՕ

ԳՈՐԾԸ ԳՈՐԾ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

(*Les affarses sont les affaires*)

Կատակերգութիւն 3 արարւածով քարգ. Ժրաճսեռէճից Կ. ՋԱԼԱԼԵԱՆ

(*Հրատ. Տարազ շաքաճաճերթի՛*)

Գինը 40 կոպ.

Ներկայացման իրաւունքը վերապահուած է

Դիմել՝ Թարգմանչին Тифлисъ, Фрейлинская, 12. К. Джалалянцу (կամ գրավաճառներին)։

Ընդունում եմ արտագրութիւններ ՐԵՄԻՆԳՏՈՆԻ վրայ։ Հասցէս Բուլիար-օղլու վաճառանոցը, Աբխոտիկական ընկ. Թատրոնի տակ։

Աղբիւր-Տարազի խմբագրատանը

Վաճառւում են

հետեւեալ մեր հրատարակութիւնները.

	գինը
Ալֆոնս Գոդէ՝ Թոյրնդոս. *կատակերգ. 4 արար.*	50 կ.
Ա. Լ., Սաֆօ՝ *պօէմա*	50 »
Աւեճարիուս՝ Ֆրիտեճֆ Փիւցայզն, *նորմանդական հին ըրջոյց, շքեղ պատկերներով*	50 »
Նիւվանզադէ՝ Մելանիա՝ *վէպիկ փառաւոր*	50 »
Վ. Փափազեանց՝ Հայ-Բոզաճների վրաճներում եւ Ուրճի մանր	25 »
Սիսոյեվա՝ Կոլումբոս եւ ամերիկայի գիւտը	5 »
Օիլէր՝ Ֆրիդոլին, *Թարգմ.*	5 »
Բաֆֆի	5 »
Եմմա Վիքման՝ Նրա մայրը	5 »
Շմիդթ՝ Գալիա	10 »
Յ. Ղազարեանց՝ Գիւղ, *ի պահպանութիւն քիւրդերի կեանքից*	15 »
Արտիւրօ Կամպիօն՝ Պարսկական լեգենդա	2 »

«ՏԱՐԱԶԻ» ներկայ 1904 թ. բաժանորդները, ուղարկելով երկու րուբլի, կարող են ստանալ 1904 թ. տիկ. Սօֆիա Ջալալեանի ֆրանսիական կարի եւ ճեւի ճեռնարկը, ըստ ցանկութեան, հայերէն կամ ռուսերէն լեզուով։ Ճեռնարկը կունենայ հետեւեալ վերնագիրն ու բովանդակութիւնը։

ՁԵՒԻ ԵՒ ԿԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ։

Պատկերազարդ եւ գծանկարներով։ Սօֆիա Ջալալեանի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1 մաս։ 1) Նկարչական [illegible] 2), նրանց բոլոր տեսակները [illegible] ելու և յարմարացու եղանակները։ Կանոնաւոր և անկանոն կազմւածքների համար ձեւելու և յարմարացնելու միջոցներ։

2 մաս։ 1) ծածկոցներ և վերարկուներ (կօնֆէկսիօն), ժակէտ, բոռօնդ և այլն, 2) շրջազգեստներ, տանու խալաթ և պատկի զգեստներ, պերնեզդ, պօլօնեզդ և այլն։

3 մաս։ Երեխայոց զգեստներ, ծածկոցներ և վերարկուներ։ աղջիկների և տղաների համար առանձին։

4 մաս։ Ամեն տեսակ սպիտակեղէններ. կանանց, տղամարդկանց և երեխայց համար։ Ձեւելու և կարելու եղանակներ։ կարեւոր բացատրութիւններ և խորհուրդներ։ Վերջաբան։

1 մասը կուղարկւի «Տարազ»ի բաժանորդներին 1904 թ. յունիսի 1-ին, 2-րդ և 3-րդ մասը սեպտ. 1-ին և 4-րդ մասը ոկտ. 1-ին։

4-րդ մասը դուրս գալուց յետոյ ամբողջ ձեռնարկի գինը կը լինի 3 ր. 5 կ.։